

2019 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	5
	.....			

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարման ուղղված քայլերը	Կարծիք
1	2	3	4	5
Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն	09.06.01.	«1192. Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրում և շարունակականության ապահովում»	<p>Կրթության ոլորտում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրման և դրա շարունակականության ապահովման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները՝</p> <p><b>Հայաստանի կրթական ցանցի (ՀԿՑ) կառավարում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• իրականացվել է 1420 կրթական ուսումնական հաստատություններ ընդգրկող ցանցի աշխատանքի ամենօրյա հսկողությունը.</li> <li>✓ վերահսկվել է ՀԿՑ-ի տեխնիկական սպասարկման աշխատանքը,</li> <li>✓ կատարվել է դպրոցների էլեկտրոնային հասցեների օգտագործման ստուգումը,</li> <li>✓ հաշվառվել է դպրոցների օգտագործած ինտերնետի ծավալը,</li> <li>✓ կատարվել են ՀԿՑ կենտրոնական հանգույցի սպասարկման աշխատանքները,</li> </ul> <ul style="list-style-type: none"> <li>• իրականացվել է ՀԿՑ-ի կենտրոնական հանգույցում գործող սերվերների տեխնիկական սպասարկումը. ապահովվել կայքերի անխափան աշխատանքը,</li> </ul> <p>ՀԿՑ-ում ապահովվել են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• արտաքին միջամտություններից ցանցի պաշտպանությունը, գործել են ինտերնետային պարունակությունը հնարավորինս սահմանափակող ֆիլտրային ծրագիրը, տվյալների փաթեթների դիսամիկ ուղղորդումը, ցանցում եղած բոլոր համակարգիչների ավտոմատ թարմացումով հակավիրուսային կենտրոնացված համակարգը,</li> <li>• կապուղու ծանրաբեռնվածությունը ցուցադրող, գրանցող և վիճակագրական տվյալներ հավաքող առցանց համակարգի, ՀԿՑ ընթացիկ վիճակը բնութագրող դիսամիկ շտեմարանի, ուսումնական հաստատությունների օգտագործած ինտերնետային կայքերի և տվյալների ծավալների մասին գրանցումների համակարգի գործունեությունը,</li> <li>• ցանցում ընդգրկված ուսումնական հաստատությունների համար իրականացվել է վիճակագրական տվյալների հավաքման և SQL համատեղելի բազայի ու WEB սերվերի վրա</li> </ul>	

			<p>տեղադրված ուսումնական հաստատությունների էջերի տեխնիկական սպասարկման, էլեկտրոնային փոստի վարման աշխատանքների իրականացումը,</p> <ul style="list-style-type: none"> <li>կազմվել են համապատասխան ամսական հաշվետվությունները:</li> </ul> <p><b>Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի (ՇԻՅԿ) շահագործում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Հարությունագոմեր, Վերին Հորաթաղ, Կոճողոտ, Դրմբոն, Վանք և Չլդրան գյուղերի միջնակարգ դպրոցներում կայանի դասընթացներին մասնակցել են 160 աշակերտներ, վերապատրաստվել՝ 120 ուսուցիչներ,</li> <li>իրականացվել է ՇԻՅԿ-ի շահագործման ընթացիկ վերահսկումը:</li> </ul> <p><b>«Հայկական կրթական միջավայր» պորտալի և ենթակայքերի աշխատանքի կազմակերպում, ԿՏԱԿ-ի կայքի վարում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>իրականացվել է «Հայկական կրթական միջավայրի» (<a href="http://www.amedu.am">www.amedu.am</a>) տեխնիկական սպասարկման աշխատանքը, հարստացվել է բովանդակային պարունակությունը,</li> <li>գործարկվել են պորտալի ենթակայքերը.</li> <li>✓ «Հայկական կրթական միջավայր» ֆորում (<a href="http://forum.amedu.am">http://forum.amedu.am</a>, ավելի քան 2130 թեմա, 80770 գրառում, շուրջ 5485 գրանցված օգտվող), ստեղծվել են 84 նոր ուսումնամեթոդական թեմաներ, կատարվել է 4547 գրառում, գրանցվել է 120 նոր մասնակից, տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն,</li> <li>✓ «Պաշարների շտեմարան» կայք (<a href="http://lib.amedu.am">http://lib.amedu.am</a>, ավելի քան 9090 պաշար, շուրջ 6810 գրանցված օգտվող), ըստ դասակարգված բաժինների տեղադրվել են 210 նոր էլեկտրոնային պաշարներ (այդ թվում՝ ուսումնական և մեթոդական նյութեր, կրթական փաստաթղթեր, գրանցվել են 153 նոր մասնակիցներ,</li> <li>✓ «Հեռավար ուսուցում» համակարգ (<a href="http://elearning.amedu.am/">http://elearning.amedu.am/</a>). <ul style="list-style-type: none"> <li>- 81 ուսուցիչների համար կազմակերպվել է «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» թեմայով հերթական դասընթացը (07. 06. 2019-04. 07. 2019), ակտիվ ու արդյունավետ մասնակցություն ցուցաբերած ուսուցիչները կստանան ԿՏԱԿ-ի հավաստագրեր,</li> <li>- տարբեր առարկաների 8 մասնագետներ անցկացրել են հեռավար դասընթացներ 265 գործընկեր-ուսուցիչների համար,</li> </ul> </li> <li>✓ Եվրոպական միության eTwinning Plus ծրագրի <a href="http://etwinningplus.amedu.am/">http://etwinningplus.amedu.am/</a> տեղեկատվական և «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» (<a href="http://esource.amedu.am/">http://esource.amedu.am/</a>) կայքերը,</li> </ul>	
--	--	--	--	--

			<p>✓ «Դպրոցական կայքեր» <a href="http://schoolsite.am/">http://schoolsite.am/</a> տիրույթում գործող դպրոցների կայքերի շահագործմանն աջակցելու նպատակով կազմակերպվել է խորհրդատվություն,</p> <ul style="list-style-type: none"> <li>գործարկվել են ԿՏԱԿ-ի (<a href="http://www.ktak.am">www.ktak.am</a>) կայքը և ֆեյսբուքյան էջերը:</li> </ul> <p><b>Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքում, մշակում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>կազմակերպվել է գործուղում Արցախ՝ Արցախի Հանրապետության դպրոցների հաշվետվությունների ստուգման արդյունքում հայտնաբերված թերությունների սրբագրման և լրամշակման նպատակով. Ստեփանակերտ, Մարտունի, Հաղորւթ, Ասկերան և Քաշաթաղ շրջանների դպրոցների տնօրենների համար առանձին-առանձին իրականացվել են մեթոդաբանության ներկայացման և լրամշակման աշխատանքները,</li> <li>պատրաստվել են բազմաթիվ վիճակագրական և այլ հաշվետվություններ, ամփոփ տեղեկանքներ՝ ըստ ՀՀ մարզերի, գյուղական և քաղաքային համայնքների, աշակերտների և ուսանողների թվաքանակների, հաստատությունների տիպերի, կրթական ծրագրերի աստիճանի,</li> <li>ըստ այլ անհրաժեշտ չափանիշների և տրամադրվել ՀՀ ԿԳՄՍՆ, Ազգային վիճակագրական ծառայություն, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), ՉԼՄ-ների, տեղական և միջազգային ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների:</li> </ul> <p><b>Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության ուսումնասիրություն, գործընկերային կապերի հաստատում և այդ ծրագրերի համակարգում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>ԿՏԱԿ-ի աշխատակիցները որպես վերապատրաստողներ մասնակցել են «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի՝ ուսուցիչների համար անցկացվող ՏՀՏ վերապատրաստման դասընթացներին,</li> <li>տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ,</li> <li>ԱՌՆ պլանի վերանայման և լրամշակման շրջանակներում իրականացված ԱՌԿ պլանի թվայնացման տեխնիկական առաջադրանքի հիման վրա մշակվել են էլեկտրոնային համակարգը, մոնիթորինգի և հաշվետվողականության բաժինը,</li> <li>մշակվել է Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման համակարգի էլեկտրոնային տարբերակը,</li> </ul>	
--	--	--	---	--

			<ul style="list-style-type: none"> <li>• «Պարաոլիմպիկ» կրթական հիմնադրամի հետ ստորագրվել է համագործակցության հուշագիր, իրականացվել է համագործակցության առաջին քայլը՝ ԿՏԱԿ-ի կողմից կրթական տեխնոլոգիաների, մշակված գործիքակազմի և որոշ ուսումնասիրությունների ներկայացումը «Պարաոլիմպիկ» կրթական հիմնադրամի կազմակերպած Edcamp Armenia 2019 ուսուցչական/կրթական առաջին համաժողովին,</li> <li>• ապահովվել է մասնակցություն «Կրթություն և կարիերա Էքսպո-2019» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին,</li> <li>• ցուցաբերվել է տեղեկատվական աջակցություն «ՈՂԻ-2019» ամենամյա համակարգչային մրցույթի կազմակերպման աշխատանքին,</li> <li>• ըստ անհրաժեշտության, կազմվել և տարբեր շահագրգիռ կազմակերպությունների են ներկայացվել հանրակրթության ոլորտը բնութագրող ամփոփ վիճակագրական տեղեկանքներ ու աղյուսակներ:</li> </ul> <p><b>Եվրամիության Իթվինինգ Պյուն ծրագրի իրականացում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• համակարգվել է ծրագրի մասնակից ավելի քան 250 դպրոցների շուրջ 1200 ուսուցիչների աշխատանքը,</li> <li>• կազմակերպվել և Գյումրիում անցկացվել է Իթվինինգյան տարածաշրջանային առաջին համաժողովը Շիրակի մարզի ուսուցիչների համար,</li> <li>• կազմակերպվել և Աղվերանում անցկացվել է «Ճանաչել և հարգել միջմշակութային արժեքները» (“Learning and respecting intercultural values”) միջազգային սեմինարը (63 մասնակից 9 երկրներից),</li> <li>• ապահովվել է մասնակցություն</li> <li>✓ ուսուցիչների սեմինարի աշխատանքներին (Բրատիսլավա),</li> <li>✓ մանկավարժական բուհերը Իթվինինգ ծրագրում ներառվելու հարցերին նվիրված աշխատաժողովին (Բրյուսել),</li> <li>✓ աջակցող ծառայությունների հանդիպում-խորհրդակցությանը (Բրյուսել):</li> </ul> <p><b>Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի՝ ԿԿՏՀ-ի շահագործում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• իրականացվել են ԴԿՏ համակարգի տեղեկատվության մշտական ստուգման, բազաների ամենօրյա մաքրման, ՀՀ ԱՎԿ հանձնվողի տարեկան ամփոփ վիճակագրության ամբողջացման և ներկայացման աշխատանքները,</li> <li>• ապահովվել է ԴԿՏՀ-ի բովանդակային և տեխնիկական ամենօրյա սպասարկման, զրուցարանի վարման, խորհրդատվության</li> </ul>	
--	--	--	---	--

			<p>տրամադրման աշխատանքը,</p> <ul style="list-style-type: none"><li>• իրականացվել է ԿԿՏՀ-ի Նոր՝ առաջին դասարան ընդունվելու հայտագրման առցանց համակարգի շահագործումը, սպասարկումը և խնդիրների բացահայտումը,</li><li>• կազմակերպվել է առաջին դասարան ընդունվող երեխաների ծնողների և ՀՀ ԿԳՄՍՆ-ի միջև կապի և հետադարձ կապի ապահովումը (և՛ էլեկտրոնային, և՛ հեռախոսակապի միջոցներով), ինչպես նաև՝ կատարվել են դիմում-նամակների ընդունման, տեսակավորման, հայտագրման պահին ծագած խնդիրների ստուգման, Նախընտրած դպրոցում սովորողի քույր-եղբայր կապի հայտնաբերման և համակարգի շահագործման ընթացքում ծագած ցանկացած հարցի լուծման աշխատանքները:</li></ul>	
--	--	--	--	--